Հաստատված է՝»
ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի օպերատիվ-հետախուզական գործունեության և քրեագիտության ամբիոնի 31.08.2020թ-ի նիստում, արձանագրություն թիվ 1
ամբիոնի պետ, ոստիկանության գնդապետ Մ.Սեմերջյան

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ
ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

ԱՌԱՐԿԱՅԻ ԱՆՎԱՆՈՒՄ		Փորձագիտական ոլորտի դատաիրավական կարգավորումը
ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԻՉ		
ՖԱԿՈՒԼՏԵՏ		Մագիստրատուրա, առկա անվճար ուսուցում
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ		Իրավագիտություն
ԱՄԲԻՈՆ		Օպերատիվ-հետախուզական գործունեության և քրեագիտության ամբիոն E-mail: OHGKRIM@mail.ru
ՀԵՂԻՆԱԿ/ՆԵՐ		Վահե Ենգիբարյան հեռախոս 077-95-55-55 E-mail: vahe777@yahoo.com
ՈՒՍ.ՏԱՐԻ/ԿԻՍԱՄՅԱԿ		1-ին կուրս, 2- րդ կիսամյակ
ԿՐԹԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆ		մագիստրոս

ԿՐԵԴԻՏՆԵՐ		3 (երեք)
ԴԱՍԱԺԱՄԵՐԻ ԲԱՇԽՈՒՄ ԵՎ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ԱԽԱՏԱՆՔՆԵՐ		«Փորձագիտական ոլորտի դատաիրավական կարգավորումը» դասընթացի ընդհանուր ծավալը կազմում է 90 ժամ, որից 30 ժամը դասախոսություն, 6 ժամը սեմինար, 54 ժամը ինքնուրույն աշխատանք: Ինքնուրույն աշխատանքի համար նախատեսված ժամերին սովորողը կատարում է գրականության ընթերցում և մշակում, վերլուծական, հետազոտական աշխատանք, լրացնում է ձևաթղթեր, դասախոսի հանձնարարությամբ կարող է գրել ռեֆերատներ, պատրաստվում է հաջորդ դասին: Լսարանային դասերը կայանում են շաբաթը մեկ անգամ՝ 80 րոպե տևողությամբ: Դասընթացն ավարտվում է կիսամյակի վերջում ստուգարք հանձնելով:
ՄՈՒՏՔԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ		Դասընթացը կառուցվում է «Քրեական իրավունք», «Քրեական դատավարություն», «Կրիմինալիստիկա» դասընթացների իմացության վրա:
ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ		«Փորձագիտական ոլորտի դատաիրավական կարգավորումը» դասընթացի շրջանակներում ուսումնասիրվում են փորձագիտական ոլորտի դատաիրավական կարգավորում առարկայի բովանդակությունը, հիմնադրույթները, դատական փորձաքննությունների հիմնական տեսակները, փորձագիտական ոլորտը կարգավորող իրավական ակտերը, ինչպես նաև վերաբերելի նախադեպային դատական ակտերը:

ՆՊԱՏԱԿ **ԽՆԴԻՐ/ՆԵՐ**		Դասընթացի նպատակն է սլսանողներին հաղորդել գիտելիքներ և ձևավորել կարողություններ փորձագիտական ոլորտի դատաիրավական կարգավորում առարկայի բովանդակության, հիմնադրույթների, դատական փորձաքննությունների հիմնական տեսակների, փորձագիտական ոլորտը կարգավորող իրավական ակտերի, ինչպես նաև վերաբերելի նախադեպային դատական ակտերի վերաբերյալ: Դասընթացի խնդիրներն են՝ 1) ներկայացնել փորձագիտական ոլորտի դատաիրավական կարգավորման հիմնադրույթները, 2) ներկայացնել փորձագիտական գործունեության ոլորտը կարգավորող օրենսդրության համակարգը 3) ներկայացնել փորձագիտական գործունեության արդյունքի՝ փորձագետի եզրակացության ապացուցողական նշանակություն ու օգտագործման արդյունավետությունը, 4) ներկայացնել փորձաքննությունների հիմնական տեսակները:
ԿՐԹԱԿԱՆ ԵԼՔԱՅԻՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ ***Կարողանա՝***		1) ստացված գիտելիքները կիրառել պրակտիկ գործունեության բնագավառում, 2) կատարել տվյալ բնագավառին վերաբերող ինքնուրույն վերլուծություն և հետազոտություն՝ ընդհուպ գիտական նորույթի աստիճանի:
ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ		
Հիմնական		1) ՀՀ քրեական օրենսգիրք, 2003թ.: 2) ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք, 1998թ.: 3) ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագիծ: www.parliament.am 4) ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրք, 1998թ.: 5) ՀՀ վարչական դատավարության օրենսգիրք, 2013թ.: 6) ՀՀ քրեական դատավարություն (հատուկ մաս). Հեղինակային խմբի ղեկավար Ղազինյան Գ.Ս.: Երևան, 2005թ.: 7) ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումների գիտագործնական մեկնաբանություններ: Հատոր 1: Երևան, 2011թ.: 8) ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումների գիտագործնական մեկնաբանություններ: Հատոր 2: Երևան, 2013թ.: 9) ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումների գիտագործնական մեկնաբանություններ: Հատոր 3: Երևան, 2016թ.: 10) Օհանյան Լ. Պ. Կրիմինալիստիկան Հայաստանի Հանրապետությունում, Երևան 2007թ.: 11) Օհանյան Լ. Պ. Կրիմինալիստիկան ֆոնոսկոպիա: Երևան 2002թ.: 12) Ենգիբարյան Վ. Գ. Դատական փորձաքննությունների արդի հիմնախնդիրները: Մենագրություն: Երևան 2007թ.: 13) Ենգիբարյան Վ. Գ. Հանցագործությունների քննության մեթոդիկա: Կրիմինալիստիկական մեթոդիկա: Բուհական դասագիրք: Երևան 2017թ. 14) Ենգիբարյան Վ. Գ. Հանցագործությունների քննության կազմակերպման քրեադատավարական և կրիմինալիստիկական հիմքերը: Մենագրություն: Երևան 2016թ.: 15) Ենգիբարյան Վ. Գ. և ուրիշներ, Դատական փորձագիտության տեսություն (Ծագումնաբանությունը, արդի հիմնախնդիրները և կատարելագործման հեռանկարները): Երևան, 2012թ.: 16) Ենգիբարյան Վ. Գ. և ուրիշներ, Դատական փորձագիտության տեսության և պրակտիկայի հիմնախնդիրները միջազգային իրավական համագործակցության շրջանակներում: Երևան, 2013թ.:

		17) Ենգիբարյան Վ. Գ. Փաստաթղթերի տեխնիկա-կրիմինալիստիկական հետազոտման ընթացքի և արդյունքների ամրագրումը// Պետություն և իրավունք № 1 (15), 2002թ.: 18) Ենգիբարյան Վ. Գ. Դատական փորձաքննություն նախաձեռնող մարմինների համակարգն ըստ նոր ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի նախագծի // ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի նախագծի հիմնախնդիրներին նվիրված գիտական հոդվածների ժողովածու: Երևան, 2014թ.: 1) Енгибарян В. Г. Криминалистическая теория расследования массовых беспорядков. Монография. Москва, 2014. 2) Енгибарян В. Г. Правовые основы экспертной деятельности по уголовно-процессуальному законодательству Республики Армения// Евразийский союз ученных (ЕСУ) № 12(21), 2015 3) Енгибарян В. Г. Концепция судебных экспертиз по новому проекту УПК Республики Армения//«Образование. Наука. Научные кадры» № 01/14 Москва, (2014) 4) Комментарий к законодательству о судебной экспертизе. Отв. ред. Орлова В. Ф. М., 2004. 5) Комментарий к федеральному закону «О государственной судебно-экспертной деятельности в Российской Федерации». Кашеиова В. Г. М., 2003. 6) Корухов Ю. Г. и др. Криминалистическая экспертная диагностика. М., 2003. 7) Корухов Ю.Г. Судебная экспертиза в гражданском процессе. М., 2007. 8) Вызовы времени и експертные технологии правоприминеиие Под ред. Смирновой С.А., Москва, 2011. 9) Силлабусы по судебной экспертизе: Учебно-методический комплекс. Под ред Смирновой С.А.., Москва, 2011. 10) Криминалистика. Под ред. Белкина Р. С. Москва, 1999. 11) Криминалистика. Под ред. Герасимова И.Ф. и Драпкина Л.Я. Москва, 2000. 12) Махов В Л. Использование знаний сведущих лиц при расследовании преступлений. Москва, 2000. 13) Производство судебных экспертиз, пособие для следователей, судей и экспертов, ВНИИВЭ. Отв.ред. Аринушкин Г.П., Шляхов А.Р. Москва, 1988. 14) Орлова Ю. К. Судебная экспертиза как средство доказывания в уголовном судопроизводстве. Москва, 2005. 15) Россинская Е. Р. Судебная экспертиза в гражданском, арбитражном, административном и уголовным процессе. Москва, 2005. 16) Современные возможности судебной экспертизы. Авторский коллектив, научный редактор Ю. Г. Корухов. Москва, 2000.
Լրացուցիչ		1) Абрамов С. С., Кутузов. А. Д., Сонис. М. А., Криминалистическое исследование холодного оружия. Москва, 2011. 2) Судебно-почерковедческая экспертиза- Обшая часть. Под ред. Орловой В.Ф., Москва, 2011. 3) Судебно-почерковедческая экспертиза- Особенная часть. Под ред. Орловой В. Ф., Москва, 2011. 4) Беляева Л. Д., Ольхова И. Я. Итоги обобщения экспертной практики криминалистического исследования лакокрасочных материалов и покрытий. Москва, 2003. 5) Беляева Л. Д., Казакова Л. И., Карабач М.Л., Халюченко Н.Н. Обобщение экспертной практики ио криминалистическому исследованию

		пластмасс и изделий из них// Экспертная практика и новые методы исследования. Москва, 1981. 6) Горбачева И. В. Судебно-баллистическая экспертиза // Современные возможности судебной экспертизы. Москва, 2000. 7) Енгалычев В. Ф. Диагностика психического воздействия в процессе судебно-психологической экспертизы // II Всероссийской научной конференции Российского Психологического Общества. Ростов-на-Дону, 1997. 8) Каганов А.Ш. Средство фоно- и видеотехники как источник доказательственной информации//Вещественные доказательства. Информационные технологии процессуального доказываия/. Москва, 2002. 9) Криминалистическое исследование нефтепродуктов и горюче-смазочных материалов. Москва, 1989. 10) Майлис Н.П. Судебная трасология. Москва, 2003. 11) Спасович В. Д. О теории судебно-уголовных доказательств в связи с судоустройством. Москва, 2001. 12) Сурынга Н. Е. Повышение эффективности использования специальных технико-криминалистических познаний в раскрытии и расследовании преступлений. Москва, 1992. 13) Предмет, объект и задачи судебно-товароведческой экспертизы. Москва, 2002. 14) Современные возможности судебной экспертизы. Под ред. Ю. Г. Корухова. Москва, 2000. 15) Шишлин С. С. Система судебно-психологической экспертизы. Харьков, 2004. 16) Юрислингвистика - 3: проблемы юрислингвистической экспертизы. Под ред. Голева Н. Д. Барнаул, 2002. 17) Приказ от 20 декабря 2002г. № 347 «Об утверждении Инструкции по организации производства судебных экспертиз в судебно-экспертных учреждениях системы Министерства юстиции Российской Федерации». 18) Приказ от 14 мая 2003г. № 114 «Об утверждении перечня родов (видов) экспертиз, выполняемых в государственных судебно-экспертных учреждениях Министерства юстиции Российской Федерации, и перечня экспертных специальностей, по которым предоставляется право самостоятельного производства судебных экспертиз в государственных судебно-экспертных учреждениях Министерства юстиции Российской Федерации». 19) Приказ от 15 июня 2004г. № 112 «Об утверждении Положения об организации профессиональной подготовки и повышения квалификации государственных судебных экспертов учреждений Министерства юстиции Росси некой Федерации». 20) ՀՀ ոստիկանության պաշտոնական ինտերնետային կայքէջ http://www.police.am 21) ՀՀ արդարադատության նախարարության «Փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի պաշտոնական ինտերնետային կայքէջ http://www.justexpert.am 22) ՀՀ ԳԱԱ Փորձաքննությունների ազգային բյուրո ՊՈԱԿ-ի պաշտոնական ինտերնետային կայքէջ http://www.nbe.am

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԸ ԵՎ ԿՇԻՌ		Ընթացիկ գնահատման ձևը ստուգարք

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՍԱՆԴՂԱԿ		Գնահատման արդյունարար միավոր	Գնահատականը տառանշումով
			ստուգված
			չստուգված
			չներկայացած
ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ / ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ		Սովորողը դասընթացից կարող է հանդես բերել մինչև 100% (ստուգված) առաջադիմություն: Սովորողի գիտելիքները, ունակությունները և հմտությունները գնահատվում են «Գերազանց», «Լավ», «Բավարար» և «Անբավարար» կամ «Ստուգված» կամ «Չստուգված»: Սովորողների գիտելիքները գնահատվում են հետևյալ չափանիշներով՝ ա) «Գերազանց», եթե սովորողը խոր և հիմնավոր է յուրացրել ամբողջ ծրագրային նյութը, սպառիչ, հաջորդական, գրագետ ու տրամաբանորեն կառուցված է շարադրում այն, նյութը սերտորեն կապում է ոստիկանության ծառայության խնդիրների հետ, չի դժվարանում պատասխանել, երբ ձևափոխվում է առաջադրանքը, ազատորեն լուծում է խնդիրներն ու կատարում գործնական առաջադրանքները, ճիշտ է հիմնավորում ընդունած որոշումները, ընդունակ է ինքնուրույն ընդհանրացնել և շարադրել նյութը՝ սխալներ թույլ չտալով. բ) «Լավ», եթե սովորողը հիմնավոր գիտի ծրագրային նյութը, գրագետ է և ըստ էության շարադրում է այն, հարցին պատասխանելիս թույլ չի տալիս էական անճշտություններ, կարողանում է ճիշտ կիրառել տեսական դրույթները, գործնական առաջադրանքները կատարելիս տիրապետում է անհրաժեշտ ունակությունների ու հմտությունների. գ) «Բավարար», եթե սովորողը յուրացրել է միայն հիմնական նյութը, բայց չգիտի դրա առանձին մանրամասները, թույլ է տալիս անճշտություններ, ոչ ճիշտ ձևակերպումներ, խախտում է ուսումնական նյութի շարադրման հաջորդականությունը և դժվարանում է կատարել գործնական առաջադրանքները. դ) «Անբավարար», եթե սովորողը չգիտի ծրագրային նյութի զգալի մասը, թույլ է տալիս էական սխալներ, չի կարողանում կատարել գործնական առաջադրանքներն ու լուծել խնդիրները:	
ԱՅԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ			
Ներկայություն		Դասընթացի ծրագրի որևէ փոփոխություն նախօրոք կտեղեկացվի սովորողին:	
Գրավոր աշխատանքներին ներկայացվող պահանջներ		Սովորողի դասերին ներկայությունը բխում է նրա իսկ շահերից, քանի որ ներկայությունը ենթադրում է ունկնդրում, մասնակցություն քննարկումներին, չհասկացված կամ վատ հասկացված խնդիրների պարզաբանում, ինքնուրույն և գործնական աշխատանքների հանձնում: Սովորողն այս դեպքում հնարավորություն է ունենում լսել ոչ միայն ծրագրային նյութը, այլև մասնակցել քննարկումներին, բանավեճերին, անել ինքնուրույն դատողություններ և հայտնել սեփական տեսակետը:	
		Գրավոր աշխատանքների ժամանակ արգելվում է ծածկագրերից օգտվելը: Ծածկագրի հայտնաբերման դեպքում աշխատանքը գնահատվում է զրո միավոր:	
Ինքնուրույն և գործնական աշխատանքներ		Ինքնուրույն և գործնական աշխատանքներն անհրաժեշտ է կատարել առանց կողմնակի միջամտության և հանձնել դրանք նշված ժամանակահատվածում: Ինքնուրույն աշխատանքում արգելվում է գրագողությունը: Այլոց մտքերն օգտագործելու դեպքում սովորողը պարտավոր է նշել աղբյուրը՝ ըստ ընդունված ակադեմիական ձևաչափի:	

ԹԵՄԱՏԻԿ ՏՐՈՀՄԱՆ ՔԱՐՏԵԶ

Թեմա 1 **Հայաստանի Հանրապետությունում փորձագիտական ոլորտի իրավական կարգավորման հիմունքները (Համեմատաիրավական վերլուծություն)** **(2 ժամ դասախոսություն)**	
Թեմայի հարցերը	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1) Հայաստանի Հանրապետությունում փորձագիտական ոլորտի իրավական կարգավորման հիմքերն ու համակարգը: 2) Հայաստանի Հանրապետությունում փորձագիտական ոլորտը կարգավորող օրենսդրության համամեմատական վերլուծություն, գնահատում, իրավական հիմնախնդիրների բացահայտում:	Հարցեր 1-2 անցկացվում է դասախոսություն՝ սովորողների ուշադրությունը հրավիրելով խնդրահարույց հարցերի վրա: Հարցեր 1-2 ինքնուրույն աշխատանք:

Թեմա 2 **Դատական նախադեպի դերն ու նշանակությունը ՀՀ-ում դատական փորձաքննությունների իրավական կարգավորման ոլորտում** **(2 ժամ դասախոսություն)**	
Թեմայի հարցեր	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1) Նախադեպային իրավունքի էությունը և դրա նշանակությունը ՀՀ-ում: 2) ՄԻԵԴ, ՀՀ ՍԴ և ՀՀ վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումների իրավական նշանակությունը և դերը ՀՀ քննչական ու փորձագիտական պրակտիկայի համար:	Հարցեր 1-2 անցկացվում է դասախոսություն՝ ցովորողների ուշադրությունը հրավիրելով խնդրահարույց հարցերի վրա: Հարցեր 1-2 ինքնուրույն աշխատանք:

Թեմա 3 **Հատուկ գիտելիքների բովանդակությունն ու դրանց կիրառման ձևերի իրավական կարգավորման առանձնահատկությունները** **(2 ժամ դասախոսություն)**	
Թեմայի հարցեր	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1) Հատուկ գիտելիքների հասկացությունը և բովանդակությունը: 2) Հատուկ գիտելիքների կիրառման իրավական հիմքերը: 3) Հատուկ գիտելիքների կիրառման դատավարական և ոչ դատավարական ձևերը: 4) Հատուկ գիտելիքների կիրառման ավանդական և ոչ ավանդական ձևերը:	Հարցեր 1-2 անցկացվում է դասախոսություն՝ սովորողների ուշադրությունը հրավիրելով խնդրահարույց հարցերի վրա: Հարցեր 3-4 ինքնուրույն աշխատանք:

Թեմա 4 **Փորձաքննությունների նշանակման և կատարման իրավական կարգավորման առանձնահատկությունները ՀՀ քաղաքացիական և վարչական դատավարությունների շրջանակներում** **(2 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար)**	
Թեմայի հարցեր	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1) Փորձաքննությունների նշանակումը և կատարումը որպես դատավարական գործողություն: 2) Փորձագետի եզրակացությանը ներկայացվող պահանջները: Փորձագետի ցուցմունքի, փորձագետի եզրակացության ապացուցողական դերը: 3) Փորձագետի եզրակացությունը որպես փաստական տվյալներ հաստատող փաստաթուղթ վարչական իրավախախտումների գործերով: 4) Փորձաքննությունների դերը քաղաքացուն անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչելու գործերի վարույթում:	Հարցեր 1-4 անցկացվում է դասախոսություն՝ սովորողների ուշադրությունը հրավիրելով խնդրահարույց հարցերի վրա: Հարցեր 1-2 սեմինար պարապմունքի ժամանակ սովորողների հետ քննարկվում է խնդրահարույց հարցերը և կատարվում են հարցումներ ինքնուրույն աշխատանքի վերաբերյալ:

Թեմա 5 **Փորձաքննությունների նշանակման և կատարման իրավական կարգավորման**

առանձնահատկությունները ՀՀ քրեական դատավարությունում (2 ժամ դասախոսություն)	
Թեմայի հարցեր	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1) Փորձաքննությունների նշանակման իրավական և նյութական հիմքերը: 2) Որոշակի հանգամանքների հաստատումը միայն փորձագետի եզրակացությամբ: 3) Փորձաքննության կատարումը փորձագիտական հիմնարկում և դրանից դուրս: 4) Փորձաքննության նշանակումը և կատարումը դատական քննության ընթացքում:	Հարցեր 1-2 անցկացվում է դասախոսություն՝ սովորողների ուշադրությունը հրավիրելով խնդրահարույց հարցերի վրա: Հարցեր 3-4 ինքնուրույն աշխատանք:

Թեմա 6 Փորձագետի դատավարական կարգավիճակը, նրան ներկայացվող պահանջները (4 ժամ դասախոսություն)	
Թեմայի հարցերը	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1) Փորձագետի կարգավիճակը, իրավունքները և պարտականությունները: 2) Փորձագետի ձեռնհասությունն ու իրավասությունները: 3) Փորձագետին ներկայացվող դատավարական և ոչ դատավարական պահանջները: 4) Փորձագետի ցուցմունքի, փորձագետի եզրակացության փոխհարաբերակցությունն ու ապացուցողական նշանակությունը:	Հարցեր 1-2 անցկացվում է դասախոսություն՝ սովորողների ուշադրությունը հրավիրելով խնդրահարույց հարցերի վրա: Հարցեր 3-4 ինքնուրույն աշխատանք:

Թեմա 7 Փորձագետի եզրակացությունը որպես քրեադատավարական ապացույցի առանձին տեսակ (4 ժամ դասախոսություն)	
Թեմայի հարցեր	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1) Ապացույցների հասկացությունը, տեսակները և ապացուցման ենթակա հանգամանքները քրեական դատավարությունում: 2) Փորձագետի եզրակացությանը ներկայացվող դատավարական պահանջները: Փորձագետի եզրակացության կառուցվածքը: 3) Փորձագետի եզրակացության օբյեկտիվությունը, հիմնավորվածությունը, պատճառաբանվածությունը: 4) Փորձագետի եզրակացության բովանդակության ձևակերպման չափանիշներն ու ապացուցողական արժանահավատությունը:	Հարցեր 1-4 անցկացվում է դասախոսություն՝ սովորողների ուշադրությունը հրավիրելով խնդրահարույց հարցերի վրա: Հարցեր 3-4 ինքնուրույն աշխատանք:

Թեմա 8 Փորձագետի եզրակացության գնահատման իրավական և գիտական չափանիշները (2 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար)	
Թեմայի հարցեր	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1) Փորձագետի եզրակացության գնահատման իրավական չափանիշների համակարգը (արժանահավատության, թույլատրելիության վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումները): 2) Փորձագետի եզրակացության գնահատման գիտական չափանիշների համակարգը (հավանականության տեսության, տրամաբանության և կիրառված համապատասխան բնագավառի գիտելիքների համատեքստում):	Հարցեր 1-2 անցկացվում է դասախոսություն՝ սովորողների ուշադրությունը հրավիրելով խնդրահարույց հարցերի վրա: Հարցեր 1-2 ինքնուրույն աշխատանք: Հարցեր 1-2 սեմինար պարապմունքի ժամանակ սովորողների հետ քննարկվում է խնդրահարույց հարցերը և կատարվում են հարցումներ ինքնուրույն աշխատանքի վերաբերյալ:

Թեմա 9

Փորձագիտական հիմնարկների համակարգը, ինստիտուցիոնալ կառուցվածքը և դրանց գործունեությունը կարգավորող օրենսդրությունը Հայաստանի Հանրապետությունում (4 ժամ դասախոսություն)	
Թեմայի հարցեր	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1) Փորձագիտական հիմնարկին ներկայացվող պահանջներն ու փորձագիտական գործունեություն իրականացնելու իրավական հիմքերը: 2) Փորձագիտական հիմնարկների ինստիտուցիոնալ համակարգը ՀՀ-ում: 3) ՀՀ-ում փորձագիտական հիմնարկների գործունեության ոլորտները: 4) Փորձագիտական հիմնարկների գործունեությունը կարգավորող իրավական ակտերի համակարգը ՀՀ-ում:	Հարցեր 1-4 անցկացվում է դասախոսություն՝ սովորողներնի ուշադրությունը հրավիրելով խնդրահարույց հարցերի վրա: Հարցեր 3-4 ինքնուրույն աշխատանք:

Թեմա 10 Դատական փորձաքննությունների հիմնական տեսակներն ու դրանց դասակարգման չափանիշները (2 ժամ դասախոսություն)	
Թեմայի հարցեր	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1) Դատական փորձաքննությունների դասակարգման իրավական և գիտական հիմքերը: 2) Դատական փորձաքննությունների տեսակները՝ ըստ ՀՀ քրեադատավարության օրենսդրության (միանձնյա, հանձնաժողովային, համալիր, լրացուցիչ և կրկնակի, դատական, փորձագիտական հիմնարկում և հիմնարկից դուրս փորձաքննություններ) և այլ իրավական հիմքերով՝ պետական, գիտատեխնիկական, արտադատարանական (պայմանագրային) և այլն: 3) Դատական փորձաքննությունների տեսակներն ըստ կիրառվող հատուկ գիտելիքների բնագավառների՝ ապրանքագիտական, տնտեսագիտական, հաշվապահական, հոգեբանական, դատաբժշկական փորձաքննությունների առարկան, օբյեկտները, հիմնական հետազոտելի նյութերը:	Հարցեր 1-3 անցկացվում է դասախոսություն՝ սովորողների ուշադրությունը հրավիրելով խնդրահարույց հարցերի վրա: Հարցեր 2-3 ինքնուրույն աշխատանք:

Թեմա 11 Քրեաբանական փորձաքննությունների տեսակներն ու ենթատեսակները, ժամանակակից հնարավորությունները (2 ժամ դասախոսություն)	
Թեմայի հարցեր	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1)Քրեաբանական փորձագիտական լուծման համար առաջադրվող նույնացման /իդենտիֆիկացման/ և դիագնոստիկ բնույթի խնդիրների շրջանակը: 2) Քրեաբանական փորձաքննությունների հիմնական տեսակները: Ձեռագրաբանական, փաստաթղթաբանական, ֆոտոտեխնիկական, դիմանկարային, տեսա - և աուդիոձայնագրային, հետքաբանական, ձգաբանական, հրդեհատեխնիկական, նյութագիտական, ավտոտեխնիկական, պայթունատեխնիկական փորձաքննությունների առարկան, դրանց շրջանակներում լուծվող հիմնական հարցերը, հետազոտելի և համեմատական օբյեկտները:	Հարցեր 1-2 անցկացվում է դասախոսություն՝ սովորողների ուշադրությունը հրավիրելով խնդրահարույց հարցերի վրա: Հարցեր 1-2 ինքնուրույն աշխատանք:

Թեմա 12 Դատական փորձաքննությունների նորագույն ուղղությունները Հայաստանի Հանրապետությունում (2 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար)	
Թեմայի հարցեր	**Դասավանդման և գնահատման**

	մեթոդաբանություն
1) Գիտության, տխնիկայի, արհեստի ու արվեստի ժամանակակից բնագավառների հետազոտությունները՝ որպես դատական փորձաքննությունների առանձնահուկ տեսակ: Հետազոտման առարկան, օբյեկտները և հետազոտման հնարավորությունները, դրանց միջոցով լուծվող հարցերը: 2) Դատական փորձաքննությունների ժամանակակից տեսակները ՀՀ-ում. Դատագենետիկական (DNA), կլինիկատոքսիկոլոգիական /դատաքիմիական/ հոգեբանական ազդեցությունների, բռնության հետ կապված, լինգվիստական, կիբեռնետիկական, միջուկային (nuclear) փորձաքննությունների հիմնական էությունը, հնարավորությունները հանցագործությունների բացահայտման գործում:	Հարցեր 1-2 անցկացվում է դասախոսություն՝ սովորողների ուշադրությունը հրավիրելով խնդրահարույց հարցերի վրա: Հարցեր 1-2 ինքնուրույն աշխատանք: Հարցեր 1-2 սեմինար պարապմունքի ժամանակ Սովորողների հետ քննարկվում է խնդրահարույց հարցերը և կատարվում են հարցումներ ինքնուրույն աշխատանքի վերաբերյալ:

Հ Ա Ր Ց Ա Շ Ա Ր

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի մագիստրատուրայի առկա ուսուցման 2-րդ կուրսի «Փորձագիտական ոլորտի դատահիրավական կարգավորումը» առարկայի ստուգարքի

1) Հայաստանի հանրապետությունում փորձագիտական ոլորտի կայացման հիմնական փուլերը:
2) Հայաստանի Հանրապետությունում գործող հիմնական փորձագիտական կառույցները: Փորձագիտական կառույցի գործունեության հիմնական նպատակները, գործառույթները:
3) Նախաքննության, հետաքննության և դատաքննության ընթացքում փորձաքննությունների նշանակումը և կատարումը կարգավորող հիմնական իրավական ակտերը:
4) Պայմանագրային հիմունքներով իրականացվող փորձաքննությունների պատվիրման և կատարման իրավական հիմքմերը և հիմնախնդիրները:
5) Պետական, գիտատեխնիկական փորձաքննությունների նշանակման և կատարման առանձնահատկությունները:
6) Փորձագիտության ոլորտում իրավական, գիտագործնական միջազգային համագործակցության ներկայիս մակարդակը և հնարավորությունները՝ Հայաստանի Հանրապետությունում տվյալ ոլորտը կարգավորող իրավական դաշտի կատարելագործման առումով:
7) Հիմնական և լրացուցիչ փորձաքննությունները: Առաջնային և կրկնակի փորձաքննությունները: Քրեագիտական և ոչ քրեագիտական փորձաքննությունները:
8) Հայաստանի Հանրապետությունում կիրառվող դատական փորձաքննությունների տեսակները և ենթատեսակները: Դատական փորձաքննությունների միջազգային դասակարգումը:
9) Փորձաքննությունների նշանակումը և կատարումը որպես կարևոր դատավարական գործողություն: Փորձագետը որպես քրեական դատավարության առանձնահատուկ սուբյեկտ:
10) Փորձաքննություն նշանակելու և կատարելու հիմքերը: Միանձնյա, հանձնաժողովային, համալիր, լրացուցիչ և կրկնակի փորձաքննությունների նշանակման և կատարման առանձնահատկությունները:
11) Փորձաքննության կատարումը փորձագիտական հիմնարկում և նրանից դուրս: Փորձաքննության նշանակումը և կատարումը դատական քննության ընթացքում: Պետական, գիտատեխնիկական փորձաքննությունների նշանակման և կատարման առանձնահատկությունները:
12) Փորձաքննության անցկացման կարգը: Փորձագիտական եզրակացության հանդեպ ներկայացվող պահանջներ, նրա ապացուցողական նշանակությունը:
13) Քաղաքացուն անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչելու գործերի վարույթում փորձաքննությունների դերը:
14) Փորձագետի եզրակացության հանդեպ ներկայացվող պահանջներ: Փորձագետի ցուցմունքի, փորձագետի եզրակացության ապացուցողական դերը:
15) Ձեռագրաբանական, փաստաթղթաբանական, ֆոտոտեխնիկական դիմանկարային, տեսա- և աուդիոձայնագրային, հետքաբանական, ձգաբանական, հրդեհատեխնիկական, նյութագիտական, ավտոտեխնիկական, պայթունատեխնիկական փորձաքննությունների առարկան և էությունը: Նրանց հետազոտելի և համեմատական օբյեկտները:
16) Փորձագիտական լուծման համար առաջադրվող նույնացման /իդենտիֆիկացման/ և դիագնոստիկ բնույթի խնդիրների շրջանակը:
17) Հոգեբանական ազդեցությունների, բռնության հետ կապված փորձաքննությունների հիմնական էությունը և հնարավորությունները:

18) Լինգվիստական հետազոտությունների դերը հեղինակային փորձաքննությունների կատարման ընթացքում: Համակարգչա-տեխնիկական փորձաքննությունների ներկայիս հնարավորությունները:
19) Դատաբժշկական փորձաքննությունները որպես դատական փորձաքննությունների առանձնահուկ տեսակ: Առարկան, օբյեկտները և ներկայիս հնարավորությունները:
20) Դատագենետիկական փորձաքննությունների հիմնական էությունը, հնարավորությունները հանցագործությունների բացահայտման գործում:
21) Կլինիկատոքսիկոլոգիական /դատաքիմիական/ փորձաքննությունների դերը և հնարավորությունները թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ տայքարում և տվյալ տեսակի հանցագործությունների նախականխման գործում:
22) Հոգեբանական փորձաքննությունների առարկան և հետազոտելի օբյեկտները: Հիմնական տեսակները, նրանց մեթոդոլոգիական հնարավորությունները:
23) Նշանակման և իրականացման առանձնահատկությունները նախատեսված ՀՀ դատավարական օրենսգրքով:
24) Ապրանքագիտական փորձաքննությունների առարկան, օբյեկտները, հիմնական հետազոտելի նյութերը:
25) Փորձագիտական կարողությունները և հիմնական խնդիրները:
26) Տնտեսագիտական և հաշվապահական փորձաքննությունների առարկան, օբյեկտները, հիմնական հետազոտելի նյութերը:
27) Հետազոտությունների մեթոդոլոգիական հնարավորությունները և փորձագիտական լուծման համար առաջադրվող հիմնական հարցերի շրջանակը: